Ա. Լ. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

ՊԱՂԵՍՏԻՆԻ ՀԱՐՑԸ ԳՖՀ-Ի ՄԵՐՁԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Մերձավոր արևելքում ԳՖՀ-ի ազդեցության ուժեղացումն ու շրջանի երկրներում նրա տնտեսական էքսպանսիայի չափերի մեծացումը արդյունք էին արևմտագերմանական մի շարք կառավարությունների 70-ական թթ. և 80-ական թթ. սկզբին մերձավորարևելյան «հավասարակշռված» քաղաքականության։ Ընթանալով զարգացող երկրների նկատմամբ՝ իմպերիալիստական տերությունների ընդհանուր քաղաքականության հունով, չանալով խանգարել հեղափոխական պրոցեսների զարգացումն ու նրանց պահել կապիտալիզմի ուղեծրում, ԳՖՀ-ը արաբական, հատկապես նավթարդյունահանող երկրների հետ փոխհարաբերությունների ավելի ճկուն մեթոդների ու ձևերի տևական որոնումների մեջ էր, որը երբեմն, թեկուզ և ձևականորեն, կարծես թե հակասում էր իր գլխավոր դաշնակցի՝ Միացյալ նահանգների շահերին։

Ժամանակակից փուլում ԳՖՀ-ի արաբական քաղաքականության մեջ կարևոր տեղ է գրավում մերձավորարևելյան ընդհարման կարևորագույն հարցերից մեկը՝ պաղեստինյանը։ Եվ հենց պաղեստինյան հարցի նկատմամբ ֆեդերալ կառավարության դիրքորոշման հայելում էլ անհրաժեշտ է դիտել ինչպես մերձավորարևելյան կոնֆլիկտի նկատմամբ ԳՖՀ-ի դիրքորոշման էվոլյուցիան, այնպես էլ ընդհանրապես նրա մերձավորարևելյան քաղաքականությունը։ Արևմտյան Գերմանիայի կառավարության առաջ ժամանակակից փուլում հանապազօր կանգնում է մերձավորարևելյան համապարփակ կարգավորման շրջանակներում պաղեստինյան հարցի լուծման ուղիները հստակորեն ձևակերպելու խնդիրը։ Ներկայումս գործնականում ԳՖՀ-ի քաղաքական բոլոր ուժերի կողմից գիտակցվում է այդպիսի կապը։

8—635

Սովետական պատմաբան է. Դմիտրիևը դիտել է տվել, որ «պաղեստինցի արաբների որպես պաղեստինյան ժողովուրդ համախումբը պատմական մի գործընթաց է, որի վկաները մենք ենք[1] և այդ պրոցեսի հետ մեկտեղ երկու տասնամյակ է, որ շարունակ հարկ է լինում հիմնավորել պաղեստինյան ժողովրդի ինքնորոշման, ընդհուպ սեփական պետականություն ստեղծելու իրավունքը»[2]։ Այժմ Իսրայելից բացի ոչ ոք չի համարձակվում բացահայտորեն հերքել պաղեստինյան ժողովրդի այդ իրավունքը։ Ձևականորեն այժմ այդ իրավունքի գործադրման օգտին է հանդես գալիս նաև ԳՖՀ-ի կառավարությունը։

Սակայն «պաղեստինյան հարցը» որպես այդպիսին, ԳՖՀ-ի ուշադրությունը գրավեց լոկ 70-ական թթ.։ Մինչ այդ, հետևելով ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 1967 թ. նոյեմբերի 22-ի բանաձևին, Բոնում խոսում էին սոսկ «գաղթականների հարցի» կարգավորման անհրաժեշտության մասին և ընդգծում, որ պաղեստինցի գաղթականների խնդիրը մերձավորարևելյան կոնֆլիկտի առանձնապես ողբերգական շերտն է։ Ինչպես հետագայում կանցլեր Վ. Բրանդտը նկատեց, այդ ձևակերպման մեջ առաջին հերթին շեշտվում էր հարցի մարդկային կողմը և ԳՖՀ-ը ակտիվորեն մասնակցում էր գաղթականներին օգնություն ցույց տալու ՄԱԿ-ի հատուկ ծրագրերին՝ 1967 թ. տրամադրելով 50 միլիոն մարկ[3]։ Պաղեստինյան հարցի վերաբերյալ առաջին ու բնութագրական հայտարարություններից մեկը 1972 թ. մայիսին արտաքին գործերի մինիստր Վ. Շեելի ելույթն էր, որում նշվում էր, որ մերձավորարևելյան կոնֆլիկտի կարգավորումը «անհնարին է թվում առանց պաղեստինյան հարցի արդարացի լուծման»[4], այլ խոսքով՝ Պաղեստինի հարցն արդեն չէր տարանջատվում մերձավորարևելյան կարգավորման մյուս խնդիրներից, ինչպես նախկինում։ Պաղեստինի հարցում ֆեդերալ կառավարության դիրքն ավելի հստակ ձևակերպմամբ սահմանվեց 1973 թ. հոկտեմբերյան պատերազմից հետո, երբ նավթարդյունահանող արաբական երկրների նավթային բոյկոտի սպառնալիքը, անկասկած նաև ԱՄՆ-ի պրոիսրայելյան կուրսն անվերապահորեն աջակցելու հարցում չկամությունը, հանգեցրին այն բանին, որ ԳՖՀ-ը կողմ քվեարկեց Եվրոպական տնտեսական միության (ԵՏՄ) 1973 թ. նոյեմբերի 6-ի հայտնի հայտարարությանը։ Այդ հայտարարության մեջ նշվում էր, որ Մերձավոր արևելքում խաղաղություն հաստատելիս «անհրաժեշտ պիտի լինի հաշվի առնել պաղեստինցիների օրինական իրավունքները» և ոչ թե լոկ «ուշադրության առնել գաղթականների հարցը» ինչպես Անվտանգության խորհրդի № 242 բանաձևում

էր։ Այդ հայտարարությունը հետագայում հիմնարար դարձավ պաղեստինյան հարցին ԳՖՀ-ի մոտեցման համար և երբեմնակի, այս կամ այն չափով, լրացվեց ու մեկնաբանվեց պաշտոնական անձերի կողմից։

1974 թ. ապրիլին կանցլեր Բրանդտն արդեն հիշեցնում էր այն մասին, որ «պաղեստինցիների կյանքը, իրավունքն ու ապագան» կայուն և արդարացի խաղաղության անբաժան տարրերն են, ոչ թե երկրաշրջանում ճգնաժամի քաղաքական կարգավորման մի մասը, Պաղեստինի հարցը «մարդկային» խնդրից վերաճեց «քաղաքական» հարցի։ Ֆեդերալ կառավարությունը դա կապակցեց «այն մարզերի քաղաքական կառուցվածքի» հարցի հետ, որտեղ ապրում են պաղեստինցիները և կամ «որտեղ վերադառնալու են», այլ խոսքով՝ Հորդանան գետի արևմտյան ափի և Ղազայի գոտու քաղաքական վարչակառույցի խնդրի հետ։ Դրա հետ մեկտեղ ԳՖՀ-ի կառավարությունը խուսափեց աջակցել պաղեստինյան սեփական պետություն ստեղծելու «կարծիքին» գտնելով, որ դա կնշանակեր «իրադարձությունների կանխում» մինչև ԳՖՀ-ին «անհրաժեշտ է հաշվի առնել այդ ուղղությամբ անմիջականորեն մասնակից կողմերի նախաձեռնությունները»[6]։

Պաղեստինի հարցը ԳՖՀ-ի դիվանագիտությանն սկսեց հարաճուն հոդս պատճառել Ռաբատի համաարաբական հայտնի վեհաժողովից հետո, որի 1974 թ. հոկտեմբերի 28-ի բանաձևում Պաղեստինի ազատագրության կազմակերպությունը (ՊԱԿ) ճանաչվում էր Պաղեստինի արաբ ժողովրդի օրինական միակ ներկայացուցիչ և այդ հիմամբ էլ ՊԱԿ-ի ղեկավար Յ. Արաֆաթին հնարավորություն էր տրվում հանդես գալ ՄԱԿ-ում։ Իսրայելական պատմաբան Ա. Նոյշտադը գտնում է, որ հենց 1974 թվից ԳՖՀ-ը ավելի շատ հակված է արաբական համառ խնդրանքները՝ հատկապես պաղեստինյան հարցը արաբների հայեցակետով լուծելու ուղղությամբ»[7]։ «Շպիգել» հանդեսի իր հարցազրույցի մեջ Յ. Արաֆաթը նշում էր, որ ԳՖՀ-ը ՄԱԿ-ի 19-րդ ընդհանուր ժողովում (1974 թ.) պետք է հանդես գա այն բանի օգտին, որ պաղեստինցիների հարցն առաջիկայում դիտվի որպես ոչ թե գաղթականների հարց, այլ որպես իր ճակատագրի համար պայքարող ժողովրդի ձգտում։ «Մենք՝ պաղեստինցիներս,—ասում էր նա,—հուսով ենք, որ ֆեդերալ կառավարությունը ծայրահեղ դեպքում չեզոքություն կպահպանի, եթե արդեն իսկ կանգնած չէ պաղեստինյան իրավունքի կողմում»[8]։

1974 թ. նոյեմբերի 19-ին ՄԱԿ-ում Պաղեստինի շուրջը եղած վիճաբանությունների ընթացքում ԳՖՀ-ի ներկայացուցիչ Ֆոն Վեխմարը այն «տպավորությունը թողեց», որ իր երկիրն իբր աջակցում է ՊԱԿ-ի դիրքորոշմանը։ Նա հանդես եկավ հօգուտ պաղեստինյան ժողովրդի ինքնորոշման իրավունքի, հօգուտ մերձավորարևելյան ընդհարման կարգավորման շրջանակներում արաբական սեփական պետական իշխանության ստեղծման՝ մի հողատարածքի վրա, որի բռնագրավմանը Իսրայելը պետք է վերջ տա, կամ էլ ընտրի մի այլ լուծում։ Եվ սակայն, ԳՖՀ-ի արտաքին գործերի մինիստր Գենշերը Բոննի Բունդեստագում վճռականորեն սահմանազատվեց այդ ճառից, հայտարարելով, որ այն կանխորոք չի ընթերցել, թեկուզ և, գտնում է, որ «ՊԱԿ-ը ուշ կամ շուտ բանակցությունների մասնակից է դառնալու»[9]։ Իսկ 1975 թ. ապրիլի 14-ի մամուլի հայտարարության մեջ, արդեն առանց Իսրայելի հավանական քննադատական վերաբերմունքի նկատմամբ մտավախության, Գենշերը չհրաժարվեց պաղեստինցիների ինքնորոշման իրավունքի վերաբերյալ 1974 թ. ՄԱԿ-ում ԳՖՀ-ի պատվիրակության հայտարարությունից[10]։

Այն, որ խաղաղ որևէ կարգավորում չի կարող շրջանցել պաղեստինցիների ճակատագիրը և ԳՖՀ-ն էլ, ինչպես գտնում էր Գենշերը, «պարտավոր է իրապաշտության անհրաժեշտ զգացողություն դրսևորել» հաստատում է նաև ՊԱԿ-ի հետ շփումների հաստատման փաստը։ Այսպես, 1974 թ. դեկտեմբերին Բունդեստագի արտաքին գործերի հանձնաժողովի նախագահ Գ. Շրյոդերը (արտաքին գործերի նախկին մինիստր) հանդիպում ունեցավ Յ. Արաֆաթի հետ, ինչին Բոննում իսրայելական դեսպանությունն ապարդյունորեն փորձեց խանգարել։ Եվ սակայն, դա երբեք էլ չէր նշանակում, որ ԳՖՀ-ը որևէ քայլ էր ձեռնարկում ՊԱԿ-ի ճանաչման ուղղությամբ, ինչը պարզորոշ ու աներկբա շեշտվեց կանցլեր Հ. Շմիդտի կողմից. «Քանի դեռ ՊԱԿ-ը հստակորեն չի ճշտորոշել իր դիրքորոշումը երկու հարցերում, նախ՝ երաշխավորված սահմանների պայմաններում Իսրայելի գոյության իրավունքի և ապա ահաբեկչական քայլերից հրաժարման խնդրում, ապա չի կարելի լրջորեն մտածել ՊԱԿ-ի ճանաչման մասին։ Թեկուզ և դա չի նշանակում, որ ԳՖՀ-ը չի հասկանում պաղեստինցիների հուսակտուր վիճակն ու կարիքները։ Այնուամենայնիվ դրանք երկու տարբեր բաներ են»[11]։

Եվ որպեսզի չդժգոհեցնեն ԱՄՆ-ին, որը «խեթ կնայեր ըստ էության ՊԱԿ-ի պաշտոնական ճանաչմանը համազոր որևէ քայլի»[12], ԳՖՀ-ը և ԵՏՄ-ը Եվրոպական-արաբական երկխոսության կազմակերպման կապակցությամբ հանդես եկան ՊԱԿ-ին դիտորդի պաշտոնական ստատուս տալու դեմ, Արաբական պետությունների լիգային առաջարկելով բանակցությունների ընթացքում փաստաթղթերում չնշել պատվիրակների ազգությունը։

Ճանաչելով պաղեստինյան ժողովրդի ինքնորոշման իրավունքը, ԳՖՀ-ը ՊԱԿ-ին կոչ արեց Իսրայելին և դրանով վերացնել «այդ ճանապարհին կանգնած հոգեբանական և քաղաքական դժվարությունների» խոչընդոտը։ «Խաղաղության ճանապարհին այլընտրանք չկա և երբ այդ հարցը լուծվի, այն ժամանակ էլ երրորդ պետությունների կողմից ՊԱԿ-ի ճանաչումը կդադարի հարց լինելուց»[13]։ Բոննի պաշտոնական անձինք գտնում էին, որ պաղեստինցիների իրավունքի և Իսրայելի իրավունքի միջև առկա է ներքին հստակ փոխկախվածություն, երկուսն էլ պետք է ուշադրության առնվեն։ ՊԱԿ-ը և Իսրայելը պետք է մեկը մյուսին ընդառաջ գնան, դեն գցելով մեկ կամ մյուս կողմի «պատմական լավագույն իրավունքի վերաբերյալ» ամեն մի միտք[14]։ ՊԱԿ-ի և պաղեստինցիների նկատմամբ ԳՖՀ-ի այդ վերաբերմունքը, նրանց՝ որպես ժողովրդի, արդարացի իրավունքի համահավասարեցումը այն պետության իրավունքին, որը ոտնատակ է տվել այդ ժողովրդի ինքնորոշման իրավունքը, Թել-Ավիվում խիստ քննադատություն և դժգոհություն առաջ բերեց[15]։ ԳՖՀ-ի և Իսրայելի միջև պաղեստինյան հարցի շուրջը քաղաքական տարաձայնությունն ավելի ու ավելի սրվեց։ ԳՖՀ-ը, ճանաչելով պաղեստինցիների պետականություն ունենալու իրավունքը, «իսրայելցիներին քաղաքականորեն գցեց ճակատագրի քմայքին»,— հայտարարում էին Իսրայելում։ Բոննում Արաբական պետությունների լիգայի ներկայացուցիչների և ԳՖՀ-ում ՊԱԿ-ի գրասենյակի վարիչ Ա. Ֆրանջի՝ արևմտագերմանական պետական գործիչների հետ ակտիվ շփումներին, ԳՖՀ-ի պարբերական մամուլում և հեռուստատեսությամբ Ց. Արաֆաթի ելույթներին ի պատասխան Իսրայելը ֆեդերալ կառավարությանը կոչ արեց որպես «մարդասպանների օրգան» Բոննում փակել ՊԱԿ-ի գրասենյակը[16]։ Սակայն այդ կոչն անպատասխան մնաց, և ՊԱԿ-ի նկատմամբ Բոննի պաշտոնական դիրքորոշումը չփոխվեց։

Պաղեստինի հարցում ԳՖՀ-ի դիրքի ճշտման մեջ որոշ նրբերանգներ ի հայտ եկան 1977 թ. ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայում։ Հ. Դ. Գենշերը ՄԱԿ-ի ամբիոնից հայտարարեց, որ պաղեստինցիների ինքնորոշման իրավունքի ներքո ԳՖՀ-ը հասկանում է «իր ազգային ինքնությունը արդյունավետորեն արտահայտելու իրավունքը՝ «Հայրենիքի անհրաժեշտությունը»։ Եվ ելնելով դրանից, մինիստրի ելույթում պարզաբանվում էր. ֆեդերալ կառավարությունը դեմ է բռնագրավված արաբական տարածքներում իսրայելական բնակավայրերի հիմնադրմանը[17]։

1979 թ. մարտին «Եգիպտոսի և Իսրայելի միջև խաղաղության պայմանագրի» կնքմամբ ավարտված քեմպդևիդյան բանակցությունները բաց պահեցին պաղեստինյան ժողովրդի հարցը։ ԳՖՀ-ը հիմնականում հավանություն տվեց Քեմպ-դևիդյան համաձայնագրի արդյունքին, սակայն արաբական երկրներում իր դիրքերն ամրապնդելու նպատակով հանդես եկավ հօգուտ պաղեստինցիների պետական ինքնուրույնության իրավունքի, ընդունելով, որ Մերձավոր արևելքում համապարփակ խաղաղության բանալին պաղեստինյան հարցի լուծումն է, որը ներառնում է Հորդանանի արևմտյան ափի ու Գազայի գոտու ապագայի և ինքնորոշման իրավունքի հարցերը[18]։ Իսկ ԵՏՄ-ի 1979 թ. մարտի 26-ի հայտարարության մեջ էլ նշվեց, ցանկալի է, որ Քեմպ-դևիդյան պայմանագիրը հաշվի առնի «Պաղեստինյան ժողովրդի ներկայացուցիչներին, որոնք պետք է մասնակցեն բանակցություններին»[19]։ Գենշերը 1979 թ. սեպտեմբերի 3-ին որոշակիորեն ասաց նաև, թե ԳՖՀ-ի կարծիքով մերձավորարևելյան կարգավորման վերաբերյալ բանակցություններում ովքեր պետք է ներկայացնեին պաղեստինցիներին. հենց իրենց՝ պաղեստինցիներին է պատկանում իրավունքը որոշելու, թե ո՞վ պետք է ներկայացնի իրենց և թե ուրիշ ոչ ոք չի կարող հավակնել այդ իրավունքին[20]։ Իսկ եվրոպական խորհրդի 1980 թ. հունիսի 13-ի հայտարարության մեջ, որից 80-ական թթ. սկզբին ձևականորեն կառչում էր ԳՖՀ-ը, արդեն ավելի որոշակիորեն շեշտվում էր, որ բանակցություններին պետք է մասնակցեն «պաղեստինյան ժողովուրդն ու ՊԱԿ-ը»[21]։

70-ական թթ. վերջին թվում էր, որ ԳՖՀ-ը ուր որ է ճանաչելու է ՊԱԿ-ին։ ԳՖՀ-ի կառավարող շրջանների երևելի ներկայացուցիչներից մեկը, Բոնդեստագում Ազատ դեմոկրատական կուսակցության (ԱԴԿ) դեպուտատ Յու. Մելլեմանն իր կուսակցության համագումարում նշեց,

որ Իսրայելը «պարտավոր է» ճանաչել պաղեստինցիների ինքնորոշման հավակնություններն ու նրանց կազմակերպությունը՝ ՊԱԿ-ը, որի հետ և պետք է բանակցություններ ձեռնարկի։ ՊԱԿ-ն, իր հերթին, պետք է վերջ տա ահաբեկչական գործողություններին և ճանաչի Իսրայելին[22]։

Քննադատելով ԳՖՀ-ի մերձավորարևելյան քաղաքականությունը, շպրինգերյան «Դի վելտը» հեգնանքով դրում էր, որ նկատվում է «ագրեսիվ կազմակերպության առաջնորդի, ՊԱԿ-ի ղեկավար Արաֆաթի հետ հանդիպման նկրտող գերմանացիների հեղեղ»[23]։ 1979 թ. հուլիսին Յու. Մելլմանը (այն մարդը, ում վստահում է ԳՖՀ-ի արտաքին գործերի մինիստր Գենշերը), իսկ 1979 թ. օգոստոսին նախկին կանցլեր ԳՍԴԿ-ի և Սոցիալիստական ինտերնացիոնալի նախագահ Վ. Բրանդտը հանդիպում ունեցան Յ. Արաֆաթի հետ[24]։ ՊԱԿ-ի ղեկավարի հետ սրևմըտագերմանական երկու ազդեցիկ գործիչների զրույցների փաստն իսկ, անկախ այն բանից, թե ի՞նչ պատրվակով դրանք տեղի ունեցան, բացահայտ դրսևորումն էր Բոննի՝ մերձավորարևելյան կարգավորման պրոցեսին, որպես քաղաքական ուժ մասնակցելու նկրտման, առանց սակայն իր վրա վերցնելու արաբա-իսրայելական բախման միջնորդ-պետության առաքելությունը։ Ընդդիմադրությունը այդ հանդիպումները գնահատեց որպես շեղում Արևմուտքի ընդհանուր մոտեցումից՝ ՊԱԿ-ի հետ չնստել բանակցությունների սեղանին։ Ընդդիմադրության ղեկավար Հ. Կոլը, քննադատելով պաղեստինյան հարցում ԳՖՀ-ի կառավարության դիրքորոշումը, նշեց, որ Իսրայելի հետ փոխհարաբերությունները հենց դրա հետևանքով են վատթարացել[25]։ ԳՖՀ-ում Իսրայելի դեսպան Մերոցը ֆեդերալ կառավարությունից պահանջեց պարզ ու հստակ սահմանազատվել Յ. Արաֆաթի հետ Բոնդեստագի դեպուտատների հանդիպումներից։ Սակայն կառավարությունը հրաժարվեց վերջիններիս գործողությունները դատապարտելուց[26]։

ԳՖՀ-ի մերձավորարևելյան քաղաքականությունում նշմարվող «արաբասիրական» հակումը և նրա արտաքին-քաղաքական հայտարարություններում այս ժամանակաշրջանում պաղեստինյան հարցի լուծման նշանակության շեշտավորումը մի կողմից հարկ է դիտել որպես արևմտյան առաջատար տերություններից մեկի Մերձավոր արևելքում քեմպդեվիդյան պրոցեսը փակուղուց դուրս բերելու փորձ, որը միաժամանակ իր վրա է վերցնում նույնիսկ պահպանողական վարչակարգ ունեցող արաբական երկրներում հակաարևմտյան տրամադրությունները սանձահարողի դերը։ Մյուս կողմից ԳՖՀ-ը ջանում

էր զսպել արաբական աշխարհում բևեռացումը, որ կապված էր «Տոկոմության և հակազդեցության ճակատի» գոյության հետ։ Դրա հետ մեկտեղ ԳՖՀ-ը, կատարյալ իրապաշտությամբ վերաբերվելով 80-ական թթ. սկզբին Մերձավոր արևելքում ստեղծված իրավիճակին, Իսրայելի վրա ճնշում էր բանեցնում մեկ ու միակ նպատակով. թույլ չտալ, որ արաբական ազգային-աղատագրական ուժերի «ձախացման» խթանիչներից մեկը հանդիսացող Իսրայելը խոչընդոտի արաբական նավթարդյունաբերող երկրներից Արևմտյան Եվրոպա, այդ թվում ԳՖՀ հոսող նավթի անընդմեջ մատակարարումը։ Դեպի զարգացած կապիտալիստական երկրներ ԳՖՀ-ի արտահանության կրճատումը արևմտագերմանական մոնոպոլիաներին մղեց ավելի լայնորեն ներթափանցելու արաբական շուկաները և դրա համար էլ պաղեստինցիների ինքնորոշման իրավունքի նկատմամբ ֆեդերալ կառավարության դրական վերաբերմունքը կարծես թե արաբական աշխարհ մտնելու «անցաթղթերից» մեկն էր։

Դրա հաստատումն էր 1981 թ. ապրիլի 30-ին կանցլեր Շմիդտի ելույթը, որի մեջ նա հայտարարեց. «Իսրայելցիները մի օր պետք է ընդունեն, որ պաղեստինցիներն իրավունք ունեն մտածելու իրենց ճակատագրի մասին, որը և պետք է ներկայացնեն։ Ուրիշ ոչ ոք պետք չէ հաստատի դա, բացի իրենցից։ Եվ եթե նրանք պետք է ստեղծեն սեփական պետություն կամ ցանկանան այդ, բոլոր դեպքերում որոշում-ն իրենք։ Նրանք պետք է ունենան պետական ինքնուրույնության իրավունք։ Բացի դրանից, նա նշեց, որ եթե ՊԱԿ-ը Արևմուտքում նախկինի նման, առանց տարբերություն դնելու նրա ներսի խմբավորումների միջև, դիտվելու է իբրև ահաբեկիչների կազմակերպություն, եթե այդպիսի վերաբերմունքը շարունակվելու է նաև այսուհետև, ապա դա լավագույն մեթոդն է ՊԱԿ-ին հանձնել Մոսկվայի գիրկը։ Իսկ դա անխոհեմ է»[27]։ 1982 թ. Լիբանանի վրա իսրայելական արգեսիան ԳՖՀ-ի կողմից պարզապես դատապարտվեց։ Բոմբեստագում լոկ սակավաթիվ ձայներ բողոքեցին պաղեստինցիներին քաղաքականապես և ռազմականորեն ոչնչացնելու Իսրայելի մտադրության դեմ[28]։

1982 թ. հոկտեմբերի 1-ին ԳՖՀ-ի կանցլեր դարձավ Հ. Կոլը (ՔԴՄ-ՔՍՄ) որը ԱԴԿ-ի հետ խմբակցության մեջ մտնելով կազմեց նոր կառավարությունը։ Այս անգամ էլ արտաքին գործերի մինիստր դարձավ Հ. Դ. Գենշերը։ Պաղեստինցիների ինքնորոշման իրավունքի հարցում ԳՖՀ-ի վերաբերմունքի փոփոխություն կրելու առաջին նա-

խանշանաններն արդեն նկատվեցին նախքան նոր ընտրությունը։ Այսպես, Դենշերը դեռևս Հ. Շմիդտի կառավարության արտաքին գործերի մինիստր եղած ժամանակ, 1982 թ. հուլիսին դեպի Եգիպտոս և Հորդանան իր ուղևորությունից վերադարձին հայտարարեց, որ պաղեստինցիների ինքնորոշման իրավունքի կենսագործումը մեծ դժվարությունների հետ է կապված, և ԳՖՀ-ն ու ԵՏՄ-ի նրա ընկերակիցները այժմյան իրադրության մեջ «պետք է մտածեն պաղեստինցիների ինքնորոշման իրավունքի հարցում իրենց դիրքորոշումը ճշտորոշելու մասին»[29]։

Կանցլեր Կոլի կառավարական հայտարարության մեջ պաղեստինցիների ինքնորոշման իրավունքը կասկածի տակ չդրվեց, սակայն ընդգծվեց, որ Պաղեստինի ժողովուրդն ինքը պետք է որոշի, թե ո՞վ պետք է իրեն ներկայացնի բանակցություններում, իսկ ՊԱԿ-ի նկատմամբ Ֆեդերալ կառավարության վերաբերմունքը մնում է նախկինը, այն կախում է ունենալու Իսրայելի նկատմամբ ՊԱԿ-ի վերաբերմունքից, ինչը որ պետք է պարդ ու հստակ արտահայտվի անվտանգ սահմաններում Իսրայելի գոյության իրավունքի ճանաչմամբ։ Դենշերը գտնում էր, որ ՊԱԿ-ն այժմ գտնվում է պարզունացման ճանապարհին և հարկ է հուսալ, որ այդ ընթացքում հանգելու է Իսրայելի ճանաչմանը»[30]։

1983 թ. մայիսի 4-ի իր կառավարական հայտարարության մեջ կանցլեր Հ. Կոլը կարճառոտ բնութագրեց այն հիմնական սկզբունքները, որոնց հենվելով ֆեդերալ կառավարությունը մտադիր է վարել իր մերձավորարևելյան քաղաքականությունը։ «Մեր մերձավորարևելյան քաղաքականությունը կողմնորոշված է Իսրայելի գոյության իրավունքին, պաղեստինցիների ինքնորոշման իրավունքին և բռնության գործադրումից փոխադարձաբար հրաժարվելուն»[31]։

Այսպիսով, կարելի է հավաստիորեն ասել, որ պաղեստինյան հարցը 80-ական թթ. ևս մնում է ԳՖՀ-ի մերձավորարևելյան քաղաքականության կարևոր մի տարրը։

А. Л. МАНУЧАРЯН

ПАЛЕСТИНСКАЯ ПРОБЛЕМА В БЛИЖНЕВОСТОЧНОЙ ПОЛИТИКЕ ФРГ

Резюме

В ближневосточной политике ФРГ важное место занимает палестинская проблема. И именно в спектре отношения федерального правительства к палестинской проблеме раскрывается эволюция позиции ФРГ к ближневосточному конфликту, в частности, и ее ближневосточная политика вообще.

Признавая право палестинского народа на самоопределение ФРГ призывает ООП признать право Израиля на существование.

1 Е. Дмитриев, Палестинский узел. М., 1978. с. 288.

2 Նույն տեղում։

3 Bulletin des Presse—und Informationamtes der Bundesregierung, 13·12·1969, № 153, S. 1298; 26·04·1974, № 50, S. 492.

4 Bulletin, 23.05.1972 № 60, S. 582.

5 „Orient", 1973, № 4, S. 179.

6 Bulletin, 19·04· 1974, № 49, S. 473; 26·04·1974, № 50, S. 492.

7 A. Neustadt. Die deutsch-israelische Beziehungen im Schatten der EG—Nahostpolitik, Frankfurt a. M., 1983, S. 281.

8 „Der Spiegel", 7·10·1974, № 41, S. 151.

9 „Dar Spiegel", 23·12.1974, № 52, S. 18.

10 ՝՝Ալ-Ահրամ՝՝, 16 նիսան 1975։

11 „Le Figaro", 3·02·1975.

12 „The Financial Times", 14·02·1971.

13 ՝՝Ալ-Ահրամ՝՝, 17 մարտ 1975։

14 Bulletin, 2·04.1975, № 42, S. 405; 24·09·1975, № 116, S. 1155; 10·12·1976, № 132, S. 1262; 11·02·1977, № 12, S. 109.

15 „Die Zeit", 28·11.1975.

16 H.—D. Genscher. Deutsche Auenpolitik, Bona, 1977, S. 222.

17 Bulletin, 27·06.1978, № 69, S. 651.

18 Verhandlungen des Deutschen Bundestages, Bd. 104, Bonn, 1978, S. 4961.

19 „Dritte Welt., Dokumentation. Bonn, 1979, S. 75.

20 Bulletin, 6·09·1979, № 102, S. 950.

21 Bulletin, 17·06·1980, № 71, S. 599.

22 „Das Wichtigste ist der Frieden". Dokumentation des Verteidigungpolitischen Kongresses der FDP, Baden-Baden, 1980 S. 55.

23 „Die Welt", 29·08.1979.

24 „Cristian Science Monitor", 15·08·1979.

25 Verhandlungen des Deutschen Bundestages, Bd. 118, Bonn, 1979 S. 1722—
—1723.
26 „Frankfurter Allgemeine Zeitung", 10·07·1979; „Die Welt", 13·07.1979.
27 Bulletin, 6.05·1981, № 40, S. 346.
28 Verhandlungen des Deutschen Bundestages, Bd. 121, Bonn, 1982, S. 6446.
29 „Frankfurter Allgemeine Zeitung", 17·07.1982.
30 Bulletin, 11·11·1982, № 109, S. 995—996; 18·02·1983, № 20, S. 188; „Frankfurter Allgemeine Zeitung", 7.02·1983.
31 Verhandlungen des Deutschen Bundestages, Bd. 124, Bonn, 1983, S. 72.